# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<06>> մայիսի 2019թ.    N ՄՈ/166-2019

ք. Արմավիր

### ՀՈՒՆԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով <<Վաղարշապատի Հ.Հովհաննիսյանի անվան N3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ 2017 թվականի փետրվարի 6-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4.1 կետի <<դ>> ենթակետը և 2019 թվականի ապրիլի 17-ի ծանուցումը.

**ո ր ո շ ու մ ե մ**

1. 2019 թվականի մայիսի 6-ից լուծել <<Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հունան Մարտիրոսյանի հետ 2017 թվականի փետրվարի 6-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ    Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

X

VERIFIED OCSP 5/6/2019 20:19:36 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<06>> մայիսի 2019թ. N 167-2019

ք. Արմավիր

**<< ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ N3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի վեցերորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարի 2019 թվականի մայիսի 3-ի զեկուցագիրը և Հունան Մարտիրոսյանի համաձայնությունը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. <<Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Հունան Մարտիրոսյանի՝ մինչև թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

X

VERIFIED OCSP 5/6/2019 20:20:58 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230